Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
մարտի 10-ի N 226 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔ - 2011Ե ՏԱՐԵԳՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Աշխարհի ավելի քան հարյուր երկրների հայ համայնքներում հասարակական-քաղաքական կազմակերպություններ՝ հոգևոր կառույցներ, բարեգործական կազմակերպություններ, հիմնադրամներ, մշակութային և կրթական կազմակերպություններ, կուսակցություններ, հայագիտական կենտրոններ և ամբիոններ, երիտասարդական, կանանց, մարզական կառույցներ, գրադարաններ, մասնագիտական և հայրենակցական միություններ, ճանաչված սփյուռքահայեր և անհատ բարեգործներ հսկայածավալ աշխատանքներ են կատարում հայապահպանության համար։ Նրանց գործունեությունը կարիք ունի հավուր պատշաճի լուսաբանման և ներկայացման։

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ պարբերաբար հրատարակվում է «Հայկական սփյուռքե տարեգիրքը, որի տպագրությունն էապես նպաստում է Հայաստան-սփյուռք կապերի ընդլայնմանն ու ամրապնդմանը։ Արդեն հրատարակվել և սփյուռքյան կառույցներին է տրամադրվել «Հայկական սփյուռք-2009ե տարեգիրքը։

II. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Մինչև 2009 թվականը «Հայկական սփյուռքե տարեգրքի նման ձևաչափով հրատարակություն չի իրականացվել։ Առկա հրատարակությունները հայ համայնքների, համահայկական կազմակերպությունների, հոգևոր և այլ կառույցների իրականացրած

ծրագրերի, հայապահպան ձեռնարկների և հիշարժան իրադարձությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն չէին պարունակում: Նշված կառույցների միջև տեղեկատվության փոխանակման, համատեղ ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ առկա էին որոշակի դժվարություններ: Անհրաժեշտ է էական քայլեր իրականացնել սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների բարելավման և տվյալների միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ:

III. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4. Ակնկալվող արդյունքներն են՝

1) սփյուռք-սփյուռք և հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդումը, աշխարհասփյուռ հայերի համագործակցության հնարավորությունների ընդլայնումը և միջհամայնքային կապերի սերտացումը.

2) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից տարվա ընթացքում սփյուռքի հետ իրականացված ծրագրերը, համահայկական կազմակերպությունների և հոգևոր կառույցների ազգապահպան ձեռնարկները աշխարհասփյուռ հայությանը հասանելի դարձնելը.

3) հայրենիքում կամ նրա սահմաններից դուրս բնակվող յուրաքանչյուր հայի կամ կազմակերպությանը Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության իրականացմանը մասնակից դարձնելը:

5. «Հայկական սփյուռքե երկլեզու (հայերեն և անգլերեն) տարեգիրքը նախատեսվում է հրատարակել 400 էջի սահմաններում և 4000 օրինակ տպաքանակով:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

6. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության պատվերով մրցութային եղանակով հաղթող ճանաչված կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կիրականացնի «Հայկական սփյուռքե տարեգրքի հրատարակումը։

V. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

7. «Հայկական սփյուռքե երկլեզու (հայերեն և անգլերեն) տարեգիրքը նախատեսվում է հրատարակել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին, որի համար պահանջվող գումարը կազմում է 7.400.000 դրամ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ